

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԸ

Անցյալ տարի լրացավ մեծանուն լեզվաբան, հայագետ Էդուարդ Աղայանի ծննդյան 90-ամյակը: Է. Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին Սեդրիում: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ուսումը շարունակում է Երևանի պետական համալսարանում, ուր աշակերտում է իր ժամանակի նշանավոր հայագետներին՝ Դ. Աճառյանին, Ս. Սրբոյանին, Գ. Ղափանցյանին: 1939 թ. մինչև իր կյանքի վերջը Աղայանը դասախոսել է Երևանի պետական համալսարանում գուգակցելով մանկավարժական-դասախոսական գործունեությունը գիտահետազոտական աշխատանքի հետ:

Լայն ու բազմազան է եղել Աղայանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ բարբառագիտություն և լեզվի պատմություն, լեզվաբանության տեսություն և հայերենի համեմատական քերականություն, արևելյան բանասիրություն և զրականություն, դասական լեզուներ և տոմարագիտություն:

1941 թ. նա պաշտպանում է թեկնածուականատենախոսություն ներկայացնելով իր մայրենի Սեդրու բարբառի ուսումնասիրությունը, որն աչքի է ընկնում ոչ միայն նյութի գերազանց իմացությամբ, այլև հանգամանալից ջննդությամբ: Բարբառագիտության բնագավառում Աղայանի ներդրումը չի

սահմանափակվում միայն այս ուսումնասիրությամբ. նա այդ մեծագրությամբ կցված «Հայ բարբառների դասակարգումը» հավելվածում, հիմք ընդունելով նոր բարբառների ու խոսվածքների հայտնաբերումը, առաջարկում է բարբառների տիպաբանական դասակարգում՝ տարբերակելով դերբայական և զրաբարակերպ-մասնիկավոր կազմությամբ ներկա ժամանակի ձևեր ունեցող բարբառներ: Աղայանը հատուկ ուշադրություն է դարձրել բարբառային հնաբանությունների, բարբառային հնագույն տարբերությունների ջննդությանը, իսկ հայ բարբառների առաջացման հարցին նվիրված բանավեճերի («Պատմաբանասիրական հանդես» 1958-60, և «Вопросы языкознания» 1959-61) ժամանակ տպագրած հոդվածներում առաջարկում է տարբերակել հին հայերեն և նոր հայերեն բարբառները այս դեպքում և ցուցաբերելով հայոց լեզվի պատմության խոր իմացություն և բառագետ-ստուգաբանի արպտող միտք:

Է. Աղայանը լեզվաբանության տեսության հարցերին անդրադարձել է դեռևս 1940-ական թվականներին: 1947 թ. լույս է տեսնում նրա «Ընդիանուր լեզվաբանության դասընթացը», որն ունենում է հետագա վերամշակված, լրացված հրատարակություններ («Լեզվաբանության ներածու-

թյուն», 1967 թ., «Լեզվաբանության հիմունքներ», 1987 թ. և այլն): Այս գիրքը լեզվաբանության տեսական հարցերին, ընդհանուր լեզվաբանության հիմնախնդիրներին նվիրված միակ ուսումնական ձեռնարկն է հայ իրականության մեջ, և դրանով սովորել ու շարունակում են սովորել մեր մասնագիտական բուհերի ուսանողության շատ սերունդներ:

Ընդհանուր լեզվաբանության հարցերին նա անդրադարձել է նաև իր հետագա աշխատություններում: Զաջատեղյակ լինելով լեզվաբանական գիտության նորագույն նվաճումներին և լեզվական ուսումնասիրությունների նոր, մասնավորապես կառուցվածքային լեզվաբանության մեթոդներին՝ նա կատարում է ժամանակակից հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի կառուցվածքային վերլուծություն, որն իր տեսակի մեջ առաջինը լինելով՝ ոչ միայն կառուցվածքային մեթոդների կիրառությամբ կատարված լավագույն ուսումնասիրություն է, այլև աչքի է ընկնում նոր հարցադրումներով, ինքնուրույն մոտեցումներով և, որ պակաս կարևոր չէ, լեզվաբանական նոր տերմինների հայերեն հաջողված համարժեցնելով:

Այս կապակցությամբ հարկ է անդրադառնալ է. Աղայանի «Գրաբարի քերականություն» (հ. I, գիրք Ա, Եր., 1967) մեծարժեք աշխատությանը, որտեղ նա, կիրառելով կառուցվածքային լեզվաբանության ուսումնասիրության մեթոդները, կատարում է

գրաբարի հնչյունական համակարգի համաժամանակյա ուսումնասիրություն՝ ներկայացնելով այն իբրև կառուցվածք, նպատակ ունենալով պարզել կառուցվածքային տարբերմակարգակների փոխհարաբերությունները:

Է. Աղայանը դոկտորի գիտական աստիճան է ստացել 1945 թ. «Դայ լեզվաբանության պատմություն» աշխատության համար, որը հրատարակվել է երկու հատորով 1958-62 թթ.: Այս գրքում նա ներկայացնում է հայ լեզվաբանական մտքի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը (իմա՝ 20-րդ դարի 60-70-ական թվականները), կատարում հայ լեզվաբանության պատմության շրջանաբաժանում՝ լուրաքանչյուրում մանրամասն անդրադառնալով և՛ լեզվաբանական ուսմունքներին ու ուղղություններին, և՛ առանձին հայերենագետների կյանքին ու գործունեությանը:

Է. Աղայան լեզվաբանի գիտական հետազոտությունների մի կարևոր բնագավառն է հայերենի համեմատական քերականությունը: Այս ուղղությամբ նրա բովանդակալից, տարբեր լեզուներից բերված փաստական հարուստ նյութով հագեցած դասախոսությունները սեր և հետաքրքրություն էին առաջացնում ուսանողների մեջ և կանխորոշում նրանցից շատերի հետագա մասնագիտական ընտրությունը: Է. Աղայանի «Պատմահամեմատական մեթոդը լեզվաբանության մեջ» (Եր., 1957 թ.) գրքուկի արժեքը դժվար է գերազնահատել. սա

հայ լեզվաբանության մեջ այդ մեթոդի տեսական և գործնական սկզբունքները կուռ և ամբողջական ներկայացնող միակ ձեռնարկն է:

Է. Աղայանի բազմաթիվ բառաքննական-ստուգաբանական դիտարկումները, որոնք հետազայում ամփոփվեցին մեկ ժողովածուի մեջ, («Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ», Եր., 1974 թ.), աչքի են ընկնում հ.-ե. լեզուների և նրանց առնչությամբ հայերենի բառային, քերականական իրողությունների խոր վերլուծությամբ, հմուտ, գիտականորեն սրամիտ մեկնություններով:

Է. Աղայանն աչքի էր ընկնում անսահման կենսասիրությամբ արտակարգ աշխատասիրությամբ զուգակցելու բացառիկ կարողությամբ: Բացառիկ աշխատասիրության, տքնաքան աշխատանքի, բառագիտական խոր ու լայն գիտելիքների, բառարանագիտական աշխատատար ու դժվարին գործին հմուտ տիրապետելու արգասիք է նրա երկհատոր «Արդի հայերենի բացատրական բառարանը» (1976 թ.), որն ընդգրկում է շուրջ 135 հազար բառային միավոր, որոնցից 15 հազարը մինչ այդ հրատարակված բառարաններում տեղ չէին գտել: Նրանում արտացոլված են հայ բազմադարյան բառարանագրության նվաճումներն ու լավագույն ավանդույթները: Բառարանագրական աշխատանքին զուգընթաց նա զբաղվում է նաև հայերենի բառապաշարի գիտական քննությամբ, որի ար-

դյունքներն ամփոփվում են «Ընդհանուր և հայկական բառագիտություն» (Ե., 1984 թ.) մենագրության մեջ: Այստեղ նա ուսումնասիրում է ժամանակակից հայերենի բառային կազմը, կատարում բառապաշարի ծագումնաբանական և համաժամանակյա դասակարգում, անդրադառնում բառապաշարի հարստացման, իմաստաբանական զարգացման խնդիրներին, բառակազմությանը: Հատուկ ուշադրության առարկա են դառնում տերմինագիտությունը և մասնավորապես հայ տերմինաբանությունը, նրա մշակման և կատարելագործման ընդհանուր սկզբունքներն ու օրինաչափությունները:

Է. Աղայանն իր սերը զրականության, հատկապես բանաստեղծության նկատմամբ դրսևորել է ոչ միայն իբրև ընթերցող, այլև իբրև հետազոտող, թարգմանիչ: Այդ սիրո ու հետաքրքրության արդյունքն են «Դրվագներ Արևելքի զրականության պատմության» (1974 թ.) գիրքը, բազմաթիվ թարգմանությունները: Է. Աղայանը կարողանում էր ամենաբարդ հարցերի, խրթին թեմաների մասին խոսել ու գրել շատ պարզ, հասկանալի, որ վկայում է նյութի քաջատեղյակության և հստակ մտածելակերպի մասին: Եվ պատահական չէ, որ նա նաև հայոց լեզվի դպրոցական դասագիրք է հեղինակել, դասագիրք, որով երկար տարիներ դասավանդել ու առաջնորդվել են մեր դպրոցների ուսուցիչները: Դասագիրքն աչքի է ընկնում քերականական կանոնների

հստակ ձևակերպումներով, հայ գրականությունից ընտրված գեղեցիկ նմուշներով:

Թվում էր, թե հայոց լեզվի պատմության ու քերականության, ուղղագրության, նախամաշտոցյան գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի ստեղծման, հայ բարբառագիտության ու համեմատական քերականության, տերմինագիտության, դասական լեզուների, արևելքի գրականության և լեզվաբանական այլ բազմազան հարցերով ի մոտո գրադպրոց լեզվաբան-հայագետը ժամանակ և հնարավորություն չի ունենալու գրադվելու ուրիշ, լեզվաբանության հետ անմիջականորեն չառնչվող խնդիրներով: Բայց Աղայանը ունեցել է և կարողացել է: Նա գրել է «Ակնարկներ հայ տոմարների պատմության» (Եր., 1986 թ.) աշխատությունը, որտեղ տրվում է հայ ժողովրդի օգտագործած տարբեր տոմարների բնական պատմությունը սկզբից մինչև XVII դարի սկիզբը:

Անդրադառնալով հայկական հին տոմարի և հետագայում օգտագործված տոմարների հետ կապված վիճելի հարցերի և վերջնական լուծում չստացած խնդիրների բնությանը Աղայանը այստեղ ևս դրսևորում է բառագետ-համեմատաբանի իր անուրանալի տաղանդը և գրքում մի բաժին է նվիրում Արեգնակային համակարգության մոլորակների ու համաստեղությունների անվանումների, հայկական ամսանունների ու օրա-

նունների, օրվա պահերի անվանումների ստուգաբանությանը:

Է. Աղայանը գիտահետազոտական արգասավոր աշխատանքին, դասախոսական գործունեությանը զուգընթաց մեծ ուշադրություն է դարձրել նաև գիտական կադրերի պատրաստմանը: Նրա ղեկավարությամբ ատենախոսություններ են պաշտպանել մի քանի տասնյակից ավել ասպիրանտներ ու գիտաշխատողներ: Նա իր արժեքավոր գիտական խորհուրդներով օգտակար է եղել շատ երիտասարդ հետազոտողների, օգնել նրանց անգամ գիտության հետ կապ չունեցող հարցերում:

Բայց Աղայան-ղեկավարը, թող ներվի ասել, գիջում է Աղայան-աշակերտին: Աղայանն աշակերտել է Դ. Աճառյանին, նրա ղեկավարությամբ է կատարել գիտության բնագավառում իր առաջին քայլերը: Աղայանը ոչ միայն բարձր է գնահատել իր ուսուցչի գիտական հսկայական ժառանգությունը, արժեքավորել հայագիտության անդաստանում նրա կատարած հսկայածավալ աշխատանքը, այլև աշակերտի երկյուղածությամբ, նվիրվածությամբ ու անհուն երախտագիտության զգացումով է վերաբերվել մեծանուն հայագետին ինչպես նրա կենդանության օրոք, այնպես էլ մահվանից հետո: Աղայանի ջանքերով ու զործուն մասնակցությամբ են հրատարակության պատրաստվում և լույս տեսնում Դ. Աճառյանի ձեռագիր գործերը, հայտնի էր, որ Դ. Աճառյանը դրանց հրատարա-

կությունը Աղայանին է կտակել, և իր ուսուցչի այդ համծնարարությունը Աղայանն իր արտահայտությամբ՝ «պարծանոք է ընդունել» և իրականացրել մեծ բարեխղճությամբ և ամենայն պատասխանատվությամբ:

Բազմավաստակ գիտնականը սիրված ու գնահատված է եղել իր ժամանակակիցների թե՛ գործընկերների, թե՛ ուսանողության կողմից: 1953 թ. ընտրվել է ԳԱ թղթակից անդամ, 1982-ին՝ իսկական անդամ: Նա ժամանակին եղել է գիտության և կրթության կազմակերպիչ՝ վարելով տարբեր պաշտոններ թե՛ նախարարության և թե՛ մայր բուհի ներսում, ժողովրդական պատգամավոր՝ Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմնում: Աղայանն արժանացել է կառավարական բարձր պարգևների:

1970 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում, 1983թ. ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով լեզվաբանության բնագավառում կատարած աշխատանքների և գիտական կադրերի պատրաստման գործում աչքի ընկնող ծառայությունների համար:

Է. Աղայանի գիտական ժառանգությունը տարիների հեռվից ավելի տեսանելի է դառնալու, դառնալու է ապագա սերունդների համար ուսումնասիրության և ուսուցնառության մի անսպառ աղբյուր:

Ե. Մ. ՄԻՍՈՆՅԱՆ